

Հայերէն

Յ-րդ դասարան

Դասատու- Անի Տաբէտեան

Դասագիրք- «Հայրենի Աղբիւր» 1 Յարութիւն Քիւրքեան

«Դիւրին Հայերէն» Բ. Մաս Կարօ Առաքելեան

Ընթերցանութիւն- Դասարանը սորվել է տք աշակերտէն կ'ակնկալուի սահուն ընթերցանութիւն, յարգելով կէտադրական եւ առօգանութեան նշանները:

Բառագիտութիւն- Իւրաքանչիւր հատուածի «նոր» բառերը, որոնք պատճենահանուած տրամադրուած են աշակերտին, կը գրուին բառերու տետրակին մէջ: Եզդուած բառերով աշակերտը նախադասութիւն կը կազմէ, սակայն պէտք չունի զանոնք իւրացնելու ստուգումի համար:

Հարցարան- Իւրաքանչիւր դասի ընթացքին եւ աւարտին նշուած դասանիւթին մասին կը կատարուի անհրաժեշտ հարցադրումներ, որոնց ընդմէջէն աշակերտը կը լուսաբանուի եւ կը մղուի ճշգրիտ ձեւով հարցումներու պատասխաններ գտնել: Պատասխանները պէտք է ըլլան ամբողջական նախադասութեամբ եւ ո՛չ մէկ կամ երկու բառերով: Աշակերտներէն եկած ճշգրիտ պատասխանները համադրելով կ'ունենանք ճշգրիտ պատասխան մը, զորս աշակերտները կ'ընդօրինակեն իրենց տետրակներուն մէջ: Գրաւոր ստուգումի համար աշակերտը պէտք չէ գոց սորվի զանոնք:

Վարժութիւններ-«Հայրենի Աղբիւր» եւ «Դիւրին Հայերէն»

«Հայրենի Աղբիւր» վարժութիւններու շարքը կ'օգտագործուի ընթերցարանի համապատասխան նիւթին հետ զուգահեռ: Դասարանին մէջ աշակերտին կը ներկայացուի նիւթը եւ հրահանգներու ընդմէջէն ան կ'ամրապնդէ զանոնք: Աշակերտը վարժութիւնները կ'ընդօրինակէ բառերու եւ վարժութեան տետրակին մէջ: «Հայրենի Աղբիւր»-ի ինչպէս նաեւ «Դիւրին Հայերէն»-ի տան պարտականութիւններու պատասխանները պէտք է տրուին աշակերտին կողմէ, նոյնիսկ եթէ ճշգրիտ չեն անոնք, որովհետեւ ան ծանօթ է նիւթին, դասարանին մէջ հրահանգէն նմուշ մը կատարուած է եւ ի՛նք իր ճիգերով պէտք է մտածէ եւ լուծումներ գտնէ: Վարժութիւնները կը սրբագրուին դասարանին մէջ:

Նախադասութիւն կազմել- Կարճ պարբերութիւններ գրել- Նոր սորված կարգ մը բառ- երով աշակերտը նախադասութիւն կը կազմէ, որ կը սրբագրուի դասարանին մէջ, սակայն ան պէտք չունի իւրացնելու զանոնք ստուգումի համար:

Աշակերտներէն կ'ակնկալուի նաեւ իրենց սորված նոր բառերով կարճ պարբերութիւններ գրել կիրարկելով իրենց սորված ուղղագրական կանոնները եւ գրաւոր վարժութիւններու ընդմէջէն ամրապնդած օրէնքները:

Արտասանութիւն- Տարբեր առիթներով եւ նիւթերով աշակերտները կը սորվին ոտանաւորներու շարք մը: Գոց սորվելու աշխատանքին մեծ մասը կը կատարուի դասարանին մէջ:

Ձ Յատուկ ուշադրութիւն դարձնել գիրի մաքրութեան եւ կոկիկութեան, ինչպէս նաեւ գրելու ճիշդ ձեւին:

Ուղղագրություն– Ուղղագրական ստուգումները կը կատարուին շաբաթական դրությամբ:

Դասարանին մէջ աշակերտը կը ծանօթանայ զանազան ուղղագրական օրէնքներու եւ զանոնք կը կիրարկէ ուղղագրութեան համար պատրաստուելիք պարբերութեան մէջ:

- Իրաքանչիւր դասարանը ունի ուղղագրական յատուկ ծրագիր, որուն արդէն աշակերտները ծանօթ են: Նմանաձայն բառերը նաեւ մաս կը կազմեն այս ծրագրին:

Արժէտրում

- Գրաւոր իրաքանչիւր ստուգում 100%
- Մասնակի գրաւոր ստուգումներու ամբողջութիւնը (Quizzes) 100%
- Բերանացի ստուգում 100%
- Ուղղագրութեան միջին 100%

Հայոց Պատմութիւն

Դասարանին մէջ նիւթը կը ներկայացուի իր մանրանասնութիւններով: Աշակերտներէն կ'ակնկալուի սորվիլ ընդգծուած բաժիններն ու բառերը, ընդունելի հայերէնով պատախանելու համար հարցադրումներուն:

Իրաքանչիւր շրջանին հայոց պատմութեան նիշը կ'արժէտրուի հետեւեալ ձեւով՝

- Գրաւոր ստուգում 100%
- Բերանացի ստուգում 100%
- Երկու կարճ գրաւոր ստուգում 100%

«Դիրիճ Հայերէն»

➤ Բառակազմութիւն

- Արմատ
- Ածանցաւոր բառեր
- Բարդ բառեր
- Բարդ ածանցաւոր բառեր

➤ Ստուգաբանութիւն

Հնչիւնափոխութիւն

- Է ձայնաւորի հնչիւնափոխութիւնը
- Ի ձայնաւորի հնչիւնափոխութիւնը
- Ու ձայնաւորի հնչիւնափոխութիւնը
- Երկբարբառներու հնչիւնափոխութիւնը

➤ Ձեւաբանութիւն

- Հիմք եւ վերջաւորութիւն

➤ Գոյական անուն

- Գոյականը իբր խօսքի մաս
- Գոյականներու կազմութիւնը
 - Ածանցում
 - Բարդութիւն
- Բայանուն գոյականներ
- Բայանուն գոյականին տեսակները
- Յատուկ եւ հասարակ գոյական անուններ
- Գոյականին թիւը
- Գոյականներու որոշեալ եւ անորոշ առումները
- Գոյականներու հոլովումը

Հայոց Պատմութիւն Զ. Տարի Արմէն Մարաշլեան

- Դաս 1 Բագրատունեաց Հարստութեան Հիմնումը
- Դաս 2 Սմբատ Ա.
- Դաս 3 Աշոտ Բ. Երկաթ
- Դաս 4 Աբաս
- Դաս 5 Աշոտ Գ. Ողորմած
- Դաս 6 Բագրատունեաց Ոսկեդարը
- Դաս 7 Յովհաննէս Սմբատ
- Դաս 8 Բագրատունեաց Հարստութեան Անկումը
- Դաս 9 Անիի Անկումը

➤ Ղարաբաղ - Ազատագրական Ծարժում (Պատճենահանում)